ՄՐՑՈՒՅԹ ADA/AIR#15-03-24

«ՀՀ-ում կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում» ծրագրի շրջանակներում ըստ կառավարության 25 հունվարի 2024 թվականի N 106-Ն որոշման (տես հավելված 2) ՀՀ բնակավայրերում սպանդանոցային կետերի փոքրաթիվ (1-2 գլուխ), (3-5 գլուխ), (5-7 գլուխ) կենդանիների ամենօրյա սպանդի նպատակով՝

1. Տվյալ բնակավայրում ընտրված շինության նախագծի կազմման,
2. անհրաժեշտ սարքավորումների և գույքի տեխնիկական բնութագրերի տրամադրման
3. անհրաժեշտ սարքավորումների և գույքի , ձեռքբերման/մատակարարման և տեղադրման
4. Սարքավորումների անվտանգության և օգտագործման կանոնների վերաբերյալ սպանդանացային կետի անձնակազմի ուսուցումների կազմակերպման ու համապատասխան նյութերի տրամադրման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բնակավայրերում սպանդանոցային կետերի փոքրաթիվ (1-2 գլուխ), (3-5 գլուխ), (5-7 գլուխ) կենդանիների ամենօրյա սպանդի նպատակով՝

1. Տվյալ բնակավայրում ընտրված շինության նախագծի կազմման,
2. անհրաժեշտ սարքավորումների և գույքի տեխնիկական բնութագրերի տրամադրման
3. անհրաժեշտ սարքավորումների և գույքի , ձեռքբերման/մատակարարման և տեղադրման
4. Սարքավորումների անվտանգության և օգտագործման կանոնների վերաբերյալ սպանդանացային կետի անձնակազմի ուսուցումների կազմակերպման

Մրցույթի ծածկագիր՝ **ADA/AIR#15-03-24**
15 Մարտ, 2024թ.

«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը (CARD) «Ավստրիական զարգացման գործակալության» (ADA) կողմից ֆինանսավորվող «ՀՀ-ում կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում» ծրագրի շրջանակում հայտարարում է փոքր սպանդանոցների վերազինման մրցույթ:
Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձինք, որոնք ունեն վերը նշված կետերի իրականացման առնվազն 1 նման փորձ (կցել համապատասխան փաստաթղթերը), բավարարում են սույն հայտարարությամբ և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, ունեն նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական և ֆինանսական միջոցներ:
Մրցույթային փաթեթների էլեկտրոնային տարբերակները տեղակայված են նաև www.card.am կայքում: Մրցույթի հաղթող է ճանաչվելու մրցույթի որակավորման չափանիշներին առավելագույնս համապատասխանող մասնակիցը:
Հայտերը անհրաժեշտ է ներկայացնել CARD հիմնադրամի գրասենյակ՝ կնքված փակ ծրարների մեջ՝ **մինչև 2024թ մարտի 21-ի ժամը 15:00:** Հայտերը պետք է ուժի մեջ լինեն բացման օրից 60 օր:
Նշված ժամկետից հետո ստացված հայտերը չեն մասնակցի հայտերի բացմանը, որը տեղի կունենա 2024թ **մարտի 21-ին, ժամը 16:00**-ին CARD հիմնադրամի գրասենյակում մասնակցելու ցանկություն հայտնած հայտատուների ներկայությամբ:

ՀՐԱՎԵՐ

1. ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ՎԵՃՆԱԺԱՄԿԵՏԸ

Կից ներկայացված ձևաչափին համապատասխան պատրաստված Ձեր հայտը ընդունելի է տպագիր՝ **կնքված փակ ծրարով**:

Հայտի մեջ անհրաժեշտ է ներառել հայտատուի

- պետռեգիստրի վկայականի պատճեն;
- մատակարարված ապրանքների և կատարված աշխտանքների ցանկ՝ կից համապատասխան փաստաթղթերով /ուսուցումների կազմակերպման, սպանդանոցային սարքավորումների մատակարարման և տեղադրման փորձի առկայությունը պարտադիր է;
- մատակարարման ժամանակացույց;
- առաջարկը և սարքերի համապատասխան տեխնիկական փաստաթղթերը, առկայության դեպքում կատալոգ(ներ) և այլ տպագիր կամ առնչություն ունեցող նյութեր՝ ներառյալ տեղեկատվություն ապրանքատեսակների արտադրության երկիրը:

Ապրանքների և ծառայությունների արժեքները անհրաժեշտ է ներկայացնել սույն առաջարկի հրավերի Հավելված 1-ով ներկայացված ձևաչափին համապատասխան:

Դիմող կազմակերպությունները կարող են ներկայացնել իրենց հարցերը՝ գրելով mushegh.khalatyan@card.am էլ. հասցեին կամ զանգահարել +37460440550 (604), +37498098799 հեռախոսահամաներին, և/կամ այցելել «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի գրասենյակ՝ ՀՀ ք.Երևան 0037, Ազատության 1/21, 41 հասցեով:

Մրցույթին մասնակցելու համար CARD հիմնադրամը նախավճար չի սահմանում:

2. ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Փաստաթղթերի փաթեթը անհրաժեշտ է ներկայացնել փակ, ստորագրված և կնքված ծրարով:
Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ պատճենից: Տարբերակման նպատակով փաստաթղթերի փաթեթների վրա նշել "ԲՆՕՐԻՆԱԿ" և "ՊԱՏՃԵՆ" բառերը:

Ծրարի վրա նշվում են՝

- պատվիրատուի անունը և հայտի ներկայացման վայրը /պատվիրատուի հասցեն/;
- հայտարարության անունը և համարը;
- "Չբացել մինչև հայտերի բացման նիստը" բառերը;
- հայտատուի/ընկերության անվանումը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

3.ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՕՐԸ և ԺԱՄԸ

Հայտերի բացումը տեղի կունենա մրցույթի վերջնաժամկետի օրը՝ ՀՀ ք. Երևան 0037, Ազատության 1/21, 41, **2024թ. մարտի 21-ին, ժամը 16:00-ին՝** հանձնաժողովի անդամների ներկայությամբ: Հայտատուները հրավիրվում են մասնակցելու հայտերի բացմանը: Հայտերի բացման օրվա/ժամի հետ կապված փոփոխության դեպքում հայտատուները կտեղեկացվեն էլ. հաղորդագրության միջոցով:
Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ առաջարկ: Բոլոր առաջարկները, որոնք ներկայացվել են սույն կանոնի խախտմամբ՝ կմերժվեն:

Գները պետք է առաջարկվեն ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի *(«ՀՀ-ում կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում » ծրագիրը ազատված է ԱԱՀ-ից ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 16-ի N 386-Ն որոշման հաձայն, որի համար կտրամադրի համապատասխան տեղեկանք):*

Ապրանքների և ծառայությունների արժեքները անհրաժեշտ է ներկայացնել սույն առաջարկի հրավերի Հավելված 1-ով ներկայացված ձևաչափին համապատասխան:

Առաջարկները գնահատելիս անհամապատասխանությունների դեպքում գնորդը յուրաքանչյուր առաջարկի համար կսահմանի գնահատման գին՝ ուղղումներ կատարելու միջոցով, հետևյալ դեպքերում՝

- որտեղ տարբերություն կա թվերով և տառերով արտահայտված գումարների միջև՝ տառերով գրված գումարը որոշիչ է,
- որտեղ տարբերություն կա միավոր արժեքի և համապատասխան տողի ընդամենի միջև, որը ձևավորվում է միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքում՝ նշված միավոր արժեքը որոշիչ է,
- եթե մատակարարը հրաժարվում է ընդունել ճշտումները, ապա իր առաջարկը մերժվում է:

Պատվերի Շնորհում: Պատվիատուն պայմանագիր կկնքի այն Հայտատուի հետ, ում առաջարկը, մատակարարվող ապրանքների որակը և հետվաճառքային սպասարկման առաջարկը առավելագույնս կհամապատասխանի սույն առաջարկի հրավերի պահանջներին և վերոնշյալ չափորոշիչներին:

Պայմանագրի Կնքումը: Մրցույթի հանձնաժողովի որոշման հիման վրա Կազմակերպիչը ընտրված մասնակցի հետ կնքում է պայմանագիր: Պայմանագիրը կնքվում է գրավոր: « Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը նախատեսում է կնքել **պայմանագիր մինչև ս.թ. մարտի 27-ը:**

Մրցույթի Չկայացած Հայտարարելը: Մրցութային հանձնաժողովը մրցույթը չկայացած է հայտարարում, եթե՝

ա) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում Հրավերի պայմաններին;
բ) ոչ մի հայտ չի ներկայացվել;
գ) մասնակիցների առաջարկած պայմանները մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ չեն ապահովում սույն Հրավերով նախատեսված պայմանները;

Մրցույթի Առաջարկների Գնահատման Չափանիշները

Մրցույթին ներկայացված առաջարկները գնահատվելու են հետևյալ չափանիշներով՝

- առաջարկված գին;
- առաջարկվող ապրանքների տեխնիկական մասնագրերի/ տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը սույն հրավերով ներկայացված պահանջներին(Հավելված 1);
- արտադրողի կողմից երաշխիքային սպասարկման ժամկետ;
- մատակարարման ժամկետ;
- կազմակերպության համապատասխան փորձը տվյալ ոլորտում;

ԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

« » 2024թ.

Ում՝

«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամ
ՀՀ ք. Երևան, Ազատության 1/21,
1/21-40, Հեռ.՝ 374 60 440 550 (604)
Մրցույթ՝ AIR#01-22

Մենք _____ *(Կազմակերպության անվանումը)* _____ առաջարկում ենք իրականացնել **ADA/AIR#15-03-24** Մրցույթի պահանջներում ներկայացված աշխատանքները՝ (գումարը բառերով) ՀՀ դրամով:

Պայմանագիրը ստորագրելուց հետո պահանջվող գործողությունները ամբողջ ծավալով կատարելու համար մեզ անհրաժեշտ կլինի ***(օրերի քանակը)*** օր:

Սույն առաջարկը և Ձեր կողմից առաջարկի ընդունման գրությունը հիմք կհանդիսանան մեր միջև Պայմանագրի կնքման համար: Միաժամանակ մենք գիտակցում ենք, որ Դուք Ձեզ իրավունք եք վերապահում չեղյալ համարել մրցույթը, եթե ներկայացված առաջարկները գերազանցում են տվյալ ապրանքի համար նախատեսված բյուջեն կամ չեն համապատասխանում չափորոշիչներին, կամ ներկայացված են խախտումներով:

Մեր առաջարկը ուժի մեջ է ***(օրերի քանակը թվերով և բառերով)*** օր՝ սկսած սույն մրցույթի համար սահմանված առաջարկների ներկայացման վերջնաժամկետից:

Մենք սույնով հաստատում ենք, որ այս առաջարկը համապատասխանում է առաջարկի փաստաթղթերով պահանջվող Առաջարկի Վավերականությանը:

Լիազոր անձի ստորագրությունը _____

Ստորագրողի անունն ու պաշտոնը _____

Հասցե _____

Հեռ. _____

Էլ.փոստ _____

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

«_____»_____2024թ.

Ում՝
«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամ
ՀՀ ք. Երևան, Ազատության
1/21-40, Հեռ.՝ 374 60 440 550
Մրցույթ՝ **ADA/AIR#15-03-24**

Սույնով հայտարարում ենք վերջին 1 կատարված/ մատակարարված նմանատիպ աշխատանքների/ ապրանքների ցանկը.

ՀՀ	Ամիս, ամսաթիվ	Պատվիրատու կազմակերպության անվանումը	Աշխատանքների/ ապրանքների համառոտ նկրարագիրը (պայմանագրի առարկան)	Պայմանագրի ընդհանուր գումարը
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				

Կից ներկայացված են հավաստիացնող փաստաթղթերի պատճենները (տեղեկանքներ, պայմանագրեր, կատարողականներ, և երաշխավորագրեր): Անհրաժեշտության դեպքում կներկայացվեն նաև բնօրինակները: Պատվիրատուն իրավունք ունի նաև իրականացնել այցեր նախկին պատվիրատու կազմակերպություններին՝ մատակարարված ապրանքների որակը ստուգելու նպատակով:

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

Պաշտոն _____

Կազմակերպության անվանումը _____

Կնիք

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Աշխատանքների և սարքավորումների մատակարարման հանձնում ընդունումը կատարվում է ընտրված բնակավայրի հասցեում, ընդ որում երաշխիքային սպասարկման ժամկետները սկսվում են փորձակումից հետո կազմված հանձման-ընդունման ակտերի ստորագրման օրվանից, **իսկ առաքումը պետք է իրականացվի մատակարարի միջոցներով և նրա հաշվին:**

Նախատեսվող գնումների և ձեռք բերվող սպանդանոցային սարքավերումների տեխնիկական և քանակական նկարագիր:

h/h	Անվանումը		Միավորի արժեքը(ՀՀ դրամ առանց ԱԱՀ)	Ընդհանուր արժեքը(ՀՀ դրամ առանց ԱԱՀ)
1	Տվյալ բնակավայրում ընտրված շինության նախագծի կազմում	(1-2 գլուխ)		
		(3-5 գլուխ)		
		(5-7 գլուխ)		
2	Անհրաժեշտ սարքավորումների և գույքի տեխնիկական բնութագրերի տրամադրում	1		
3	Անհրաժեշտ սարքավորումների և գույքի , ձեռքբերում/մատակարարում և տեղադրում	1		
4	Սարքավորումների անվտանգության և օգտագործման կանոնների վերաբերյալ սպանդանացային կետի անձնակազմի ուսուցումների կազմակերպում	1		
Ընդամենը				

«_____»_____24թ.

Առաջարկների Հայտերի բացում

Նիստի մասնակիցների ցուցակ

Անուն Ազգանուն	Կազմակերպություն	Հեռ. /Էլ. փոստ	Ստորագրություն